


ՏԱՍՆ ԵՒ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ



Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարեկանը 6 ռուբլ:
Առանձին համարները 7 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւնը ընդունվում է ամէն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԳԱՎՈՒԹԻՒՆ

Մի նոր տեսակ վարակիչ ցաւ.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Ղուբայից. Նամակ Նոր-Բայա-դէտից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Թիֆլիսից. Արտաքին լուրեր.—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ԲՕՐՄԱ.—ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ Պանդուխտը.

ՄԻ ՆՈՐ ՏԵՍԱԿ ՎԱՐԱԿԻՉ ՑԱՒ

«Մշակի» բանասիրական բաժնի վերջին համարներում տպւած և ներկայ համարում վերջացած «Պանդուխտ» գեղեցիկ վէպի մէջ, որի հեղինակն է մեր եռանդաւաշտակից պ. Լէօ, շոշափովում է մի շատ հետաքրքիր խնդիր, որ այժմ հայոց կեանքի մէջ թէ Ռուսաստանում, թէ Թիֆլիսում, այդու և թէ Պարսկաստանում հերթական, օրվայ խնդիր է դարձել, և եթէ այդպէս կարելի է ասել՝ ներկայանում է մեզ մեր ազգային կեանքի մէջ որպէս մի նոր տեսակ վարակիչ բարոյական ցաւ:

Այդ ցաւը պահելու օրինակ է: Թէ և հայերի մէջ պանդուխտութեան սովորութիւնը միշտ զոյուլթիւն ունէր, բայց առաջ նա ներկայանում էր մեզ որպէս բացառական երևոյթ: Գուցէ դրա պատճառը պէտք է բացատրենք այն հանգամանքով որ առաջ հայորդակցութեան միջոցները այնքան հեշտ չէին, որքան այժմ: Մէկ տեղից միւս տեղ անդադար տեղափոխել, յետ ընկած տեղերից գնալ վազել մեծ կենտրոնները, փող վաստակելու դիտարկութեամբ դժուարացած էր մեր երկրի ներսում և մեր երկրից դէպի միւս հարկան երկրները հաղորդակցութեան օրինաւոր ճանապարհներ, և առհասարակ հաղորդակցութեան միջոցների պահապանութեան կամ նոյն իսկ կատարեալ բացակայութեան պատճառով:

Լինում էին, այո՛, մեծ գաղթականութիւններ հայաստանից դէպի միւս երկրները, ինչպէս օրինակ դէպի Ղրիմ, հարա-

ւային Ռուսաստան, Ասորիստան, Մօզդօլ, Ղազար, Նոր-Նախիջևան, դէպի ռուսաց և աւստրիական Լէհաստան, դէպի շնդկաստան,—բայց այդ տեսակ գաղթականութիւնները մեծ մասամբ կատարվում էին Հայաստանից խմբովին, մեծ պարտիաներով և հետևանք էին հայերի անմիջապէս անտանելի դրութեան թիւրքաց և պարսից տիրապետութեան լուծի տակ, կամ այն պատճառով էին տեղի ունենում, որ հայը իր հայրենիքում մի որ և է արտակարգ աղէտի էր ենթարկվում, ինչպէս օրինակ բարբարոս նորեկ ցեղի ձեռքով հայրենիքի, կամ նրա մի մասի նուաճումը, մի որ և է տեղական մուսուլման իշխանի մասնաւոր ձեռնմբ, կամ վերջապէս բնութեան որ և է պատուհաս, ինչպէս օրինակ՝ Տրդէհ, սով, երկրաշարժ և այլն, որոնց պատճառով Հայաստանի ամբողջ դաւաճները աւերակ էին դառնում...

Մենք չենք համարում և երբեք չենք համարել խմբովին գաղթականութեանը, բայց որպէս մի երևոյթ, որ առաջ է եկել մի որ և է արտակարգ պատուհասից, մի աղէտից, այդ տեսակ երևոյթ, որքան էլ նա հակակրկի լինէր մեզ, դարձեալ այս կամ այն կերպ, որպէս հետևանք անկաշնեղի դրութեան, բացառելի է, մասնաւոր բացառելի է եղել անցեալ դարերում, երբ մահմետական բնութեան տակ հեծող հայի հառաչանքը իր հայրենիքի հեռաւորութեան պատճառով քաղաքակիրթ աշխարհից, և լուսաւորված երկրներին հայ ազգի վիճակի անյայտ լինելու պատճառով, հայի հառաչանքը, ասում ենք, չէր կարող հասնել անգամ քաղաքակիրթ աշխարհի ականջին...

Բայց այժմեան պանդուխտութիւնը բոլորովին ուրիշ բան է, քան թէ առաջվայ հաւաքական գաղթականութիւնը: Նախ առաջ այժմեան պանդուխտութիւնը անհատական է արդարացի նոյն ծանրակշիւ պատճառների, որոնցով կարողացանք արդարացի անցեալ դարերի մեծ գաղթականութիւնները: Հայի այժմեան գաղթա-

կանութիւնները, որոնց աւելի ձիշդ է պանդուխտութիւններ անուանել, ուրիշ ոչինչ չեն, եթէ ոչ անհատական բաղադրիչներով ինչից և շուտով փող վաստակելու անյադ ցանկութիւնից առաջացած մի անհրաժեշտ ձգտում, որ միշտ յատուկ է եղել հայի բնաւորութեանը, բայց մասնաւորապէս աւելի էլ զարգացաւ մեր մէջ վերջին ժամանակներում:

Եւ ի՞նչ հետևանք, ի՞նչ օգուտ է ունենում այդ տեսակ պանդուխտութեան անհայտան ձգտումը, թէ իրան պանդուխտ անհատի համար, թէ նրա ընտանիքի համար և թէ վերջապէս այն հասարակութեան համար, որտեղից նա գաղթել է: Ոչինչ օգուտ,—բացի ֆլախից ամենքի համար... բարոյական և նիւթական ֆլախից:

Մի որ և է հայ արուեստագետ, դիցուք մի շուշեցի, ապրում է Շուշում իր ընտանիքով, թէ և աղքատ կերպով, բայց այնու ամենայնիւ ոչ ինքն, ոչ էլ իր ընտանիքը այն աստիճան աղքատ չեն, որ ստիպված աղքատ են, այո՛, բայց մարդը օրական հացը ագնիւ ճանապարհով վաստակելով, իսկ կինը անշուք աղքատիկ տան տնտեսութեամբ խնայողաբար պարագիծով, ընտանիքը ապրում է համեստ կերպով ինչպէս ասում են՝ օրը դադելով, օրն ուտելով...

Բայց յանկարծ մարդը թողնում է կնոջ ու մանուկներին ու դնում է դիցուք Բաղու, միանգամից կամ կարճ ժամանակում հարստանալու յոյսով: Նրա յոյսերից, ի հարկէ, ոչ մինչև իրադարձվում նա դառնում է բանւոր, չնչին ուժիկով, որից ոչ մի կօպէկ չէ կարող խնայել իր ընտանիքին ուղարկելու համար, մասնաւորապէս կեանքը մեծ քաղաքում աւելի թանկ է քան թէ գաղաւթական յետնկած քաղաքում, բացի սրանից մեր պանդուխտը հանդիպում է օտարութեան մէջ ամեն տեսակ դժուարութիւնների, դրաւում է մեծ արդիւնազոր կենտրոններին բանւորական կեանքին յատուկ անառակ, շուտյա-

կեանքով, սկսում է աշխատածն էլ ծախանել, պարտքերն էլ անել ու պարտք առած փողն էլ վատնել, փոքր առ փոքր կորցնում է իր առողջութիւնը, գուցէ և վարակվում է մի որ և է անբուժելի ախտով, ընկնում էլ է բարոյապէս...

Ուրեմն մեր գաւառացի արուեստագետը մինչև որ ապրում էր աղքատիկ և համեստ կերպով իր կնոջ ու երեխաների հետ գաւառական քաղաքի իր անշուք խրճիթում, նա իր ընտանիքով համ կուշտ էր, համ էլ իր առողջութիւնն ու բարոյականութիւնը, իր ֆիզիկական ու բարոյական թարմ ոյժերը կորցրած չէր:

Իսկ այժմ պանդուխտութեան մէջ՝ նա համ կորցրել է իր առողջութիւնն ու բարոյական անարատութիւնը, համ փող էլ չէ վաստակել, համ իր բացակայութեամբ անկարող եղաւ դրամ ուղարկել իր կնոջ ու մանուկներին իրանց ամենօրեայ ամենահարկաւոր կենսական պահանջը լրացնելու համար, համ էլ վերջապէս տարին ինչ յետոյ իր ծննդավայրը վերադառնալով՝ նրա աչքերին ներկայանում է հետեւեալ սրտամաշ տեսարանը. կինը և երեխաները նիհար, աւերված, հիւսնոյ, կեղտոտ, քաղցած, և դուցէ էլ մի աւելի անմիջապէս տեսարան,—կինը կամ անբարոյականութեան կամ, գոնէ մուրացականութեան ընտելացած...

Ահա պանդուխտութեան օգուտը...

Այո՛, պանդուխտութիւնը դարձել է մեր մէջ մի նոր տեսակ վարակիչ և անբուժելի ցաւ:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՍԱԿ ԳՈՒԲԱՅԻՑ

Հոկտեմբերի 21-ին

Առաջավորութիւնը և մարդասպանութիւնը դարձեալ սկսվեց յաճախ կրկնել Ղուբայում: Անցեալ օրը դաշոյնի հարուածով մի թուրք սպանեց

Ներից ծիրանի ծովը մլում է, բարձրանում: Քիչ է բարձրանում, մնում է գիւղի վրա կանգնած, կապոյտ թիթե թուղլի պէս: Այս կողմին, ճանապարհի տակ մեծ ձորի կտրած վարում են երկը ջուրտ եղներ տնքալով, ճառագնդով քաշում են արօրը դէպի բարձր, դէպի սարը: Մանուկ հոտաղը պինդ նստած է լոյծի վրա, երկար ճիւղոտ շարժում է, պինդ ձայն է տալիս եղներին, չեփէ, Ծաղիկ, դէ՛, ձանկի, շուտ գնացէ՛ք, լաւ գնացէ՛ք: Տեսնում ես, ճանապարհով գալիս է դարաշլաղեցի հայ գիւղացին, փափախ դարմանոտ, հալաւի օձիքը կարմիր, մեծ դեղնապղնձի դօտին կապած: Գարմանով բեռնած ձին առաջ է ընկել, դարմանի հակերի միջից կախ արած են հաւեր, աքաղաղներ: Փափախ զլխիդ ես դնում, գնում առաջը:—Բարի լոյս, Աստուծո՛ւ բարին: Հանաքով, ծիծաղելով առևտուրը անում, էլի նրատում...

Միտս են գալիս մեր աղբիւրները. քանի քանիսն են կան, ինչ ջուր, ինչ համ ու հոտ Աշուղից դեղին, կանաչ, կարմիր տերևները թափվել են քաղցր ջրերի վրա, քամին նրանց դէս ու դէն է տանում: Տերևները մի կողմն են հաւաքում, չըբում են, ընկնում աղբիւրի վրա... Մի կաթիլ, երկու կաթիլ, այտոնել լինէր, այս նաւթի, աղի մէջ, կառողջանայ, վեր էլ կենսաւի: Ա՛խ, ուր է... այնտեղ թափված, խմող չը կայ... Կոշտացած, քար դառած լեղուի վրա նոր ճեղքեր են բացվում... Ուղում եմ Չաքարի-այի չեղատան երգին, ձայնիցս ես էլ եմ վախում, լուռ եմ:

Յետոյ ուշա, խլիքս էլի գալիս են մեր տուն: Ես չեմ պրծնի այս հիւանդութիւնից: Կը մեռնեմ, խօսք չը կայ, այս չնաբոյնի մէջ կը մեռնեմ: Ի՞նչ կանեն երեխաներս... Գառաւորս մանկթը

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԱՆԴՈՒԹՅՈՒՆ

XVIII

Հիւանդ եմ, մին ու մենակ ընկած եմ մի օր, երկու օր: Միտսին մնալ չէ լինում, բոլորը երբ հաւաքվում են, նստելու տեղ չէ լինում: Մէկ էլ հիւանդ մարդը ասողան մարդկանց մէջ ինչի նըման կը լինի. գնալ, գալ, խօսել, ծիծաղել, հանաքներ անել, այսպիսի բաներ հօ իմ պատճառով չէին կարվի, դադարել: Ինձ փոխեցին: Պատի ջառակին մի փոքրիկ տեղ կար չիմած, չեմ իմանում թէ ինչի համար: Փայտ, տաշիղ, կացին, ուռներ կային թափված, հաւաքեցին մի անկիւնում դարսեցին, շորերս փռեցին, ինձ զցեցին այդտեղ: Մի շան բոյնից մեծ տեղ չէր:

Հիւանդ ընկած եմ մենակ: Մարմինս փշրված է. դուրս ձգում, ուղեղս ուղում է դուրս թափվել: Կողքիս վրա շուռ դալ չեմ կարողանում. մէջքս դեռան է դառել, ձրկել, ծանր է:—Եղուս սպիտակ է, ճաքճաքվել, բերանումս չէ շարժվում. ուղում եմ խօսել, հիշել խօսք լաւ է դուրս գալիս, տասներորդ խօսքը ես էլ չեմ հասկանում: Բերանս դառն է, կասես աշխարհիս լեղին անել են բերանս: Միտս, թրքերս կրակ են ընկել. ջուրն աւելի սաստկացնում է կրակը: Ձեռքս օր երբեմն տանում եմ սրտիս կամ կրակիս վրայով, կասես կաշիս ձկան մէջք է դառել: Եթէ քիչ տաք ջուր լինէր, վրաս անէի... Կեղտն ինձ ուտում է:

Ընկերներս ցերեկը դործի են լինում, ոչ ոք չէ մնում մօտս: Մտքի տակ եմ ընկնում, ուշա, խե-

ղքս ինձանից հեռանում են: Կեանքումս առաջին անգամից չէր, որ հիւանդանում եմ: Քանի քանի անգամ ջարխուլի կամ ֆարինտակի ձորերում անձրեխ տակ եմ ընկել, թրջված, ջուր կտրած, դողալով, դողողալով եկել եմ տուն: Իսկայն շորերս հանել եմ, ծածկվել անկողնի մէջ: Իսկայն ոտներս տաք ջրով լուացել են, թէ՛ են տաքացրել, դօռով խմացրել: Կինս, երեխաներս բոլորովին են չորս կողմս, ամեն մէկը վերանկի մի ծայրը պինդ պահել է, չէ թողնում քամի մտնել, ինձ մրտադրել: Մինչև ամբողջ փոքրիկ Սիմօնս էլ քիթ ու պոռնիք վեր թողած նստում էր, մէջքս պահում ցրտից: Քրտինքը դուրս էր տալիս, թրքերում, ջրողող անում ինձ: Վճռեք Աստուծո՛ւ, փառք Աստուծո՛ւ, քրտնե՛ք է՛, ասում էին երեխաներս ուրախացած և էլ պինդ ծածկում ինձ: Առաւօտը դարձնում էի ինչպէս մօրից նոր ծնված, գնում էի դործիս:

Հիմա... Վիզս կուչ է եկել, շունչս կտրվում է... մահս առաջին կանգնած է: Ղուրկս աստիկ էր: Երբ է գալիս, որքան քրտնում եմ, սիրտս չէ հովանում: Մատներս նայում եմ, եղունգներս վրա սե ցելի է հաւաքվել: Միտս ծանրանում է, կուչ է գալիս, ասում եմ, հա, հիմա կը տրաքվի. պոկս նկատում է, նկատում, հա՛ն խեղդում եմ. մէկ էլ լայնանում է, արտասուքներս աչքերս թրքում են: Ուղում եմ մի ակն քաշիմ, որ հողիս հանդուստանայ—սիրտս խողցնում է, հիմի էլ հազն է խեղդում:

XIX

Մենակ, մենակ... Կատու էլ չէ գալիս մօտս: Դրսի աշխարհը կասես թէ քշել են տարել, ձայն ու ծպուտ չեմ լսում. հաղարից մի անգամ հեռու, հեռու տեղից դործարանն է շուացնում: Մեր բոլոր սուրբերը միտս են գալիս, սրտումս

միւսին, իսկ մի այլ թուրք նոյն օրը ծանր կերպով վիրաւորեց ուրիշներ: Մանուշար-Օբայում զինուորացիներ սպանեցին գլխաւոր աւագաններին խաւարներն և չափարին, որոնք գաւառում յայտնի էին իրանց սարսափելի կողոպտումներով և մարդասպանութիւններով: Ուրախալի երեւոյթ է նկատուում զինուորացիների մէջ, որոնք հիմա իրանք են սկսել հալածել չարիքը, կոտորել, կամ կաշնաւորել աւագաններին, այն ինչ առաջ դա այդպէս չէր և զինուորացիներից շատերը մի մի խումբ աւագանների էին պահում. դրա համար էլ, որպէս ի պատիժ ուղարկուում էին Սիւրի, Լէնկօրան, Շամախի, Գեօկչայ, Սալիան և Զապադ, այն ինչ հիմա հակառակն ենք տեսնում. այդ կողմերի մարդիկնայնք ուղարկուում են այստեղ այն բանի համար, որ աւագաններին խմբեր են պահել: Եկողներին մէջ կան և խանութ և ազդեցութիւն ունեցող մարդիկ:

Այգուռի զինուոր նորերում տանուէր ընտրելու ժամանակ սպանեցին երեքին, իսկ Ամիրխանյում մի մարդ սպանվեցաւ: Նմանապէս սպանութիւններ եղան Խանօլում, որտեղ հարազատ եղբայրը իր եղբորը սպանեց: Հիւում մի մարդ, Հրիգում երկուսը և Ամսարի այգիներում մի հրէայ սպանվեցաւ:

Ամսիս 16-ին զինուոր կոտորեցին տեղիս վաճառական Ղևոնդ Գասպարեանցի խանութը և տարան 1,300 ռուբլի դուռ փող, 3—400 ռուբլու ոսկի և արծաթ, 1 հատ ներքին փոխառութեան տոմսակ և 8,000 ռուբլու վէճակներ. այդ յանդուգն գողութեան մէջ կասկածված են չորս թուրքեր, որոնք և կաշնաւորվել են: Վնասը համարում է մինչև 10,000 ռուբլի:

Փանի մի օր է, որ եկել է Ղուբա Բագուի նահանգական դատարանի բաժինը և սկսել է արդէն իր դատավարութիւնը: Նա կը մնայ ամբողջ վիշտ ու կը լինէ 250-ից աւելի քրէական գործեր: Մի պրօցես, որ կը վճռեն այս տարվայ սենսիայում շատ հետաքրքիր է, դա մի հայ գործակաւարի գործն է, որը մեղադրվում է իր տիրոջը (Գիգօլի Սօլոմոնովին) սպանելու մէջ: Գործի հանգամանքը հետեւեալ եղելութեան մէջն է: Գործակաւարը Յարութիւն անունով երիտասարդ է, ծառայել է մի քանի տարի Գիգօլու խանութում, բայց, ինչպէս որ պատմում են, վերջում տեղը ծառային դրել է իր վարձից և չէ տուել նրան ոչինչ, մինչև անգամ փողոցում կամեցել է և չորերը ծառայից հանել և խել, այդ հանգամանքը վերջինիս աւելի տուեց մարդասպանութիւն գործելու: Թէ ինչ տեսակ վճիռ կը կայանայ այդ մասին, ես կը հաղորդեմ ձեզ:

Այստեղի բանտում բանտարկեալների թիւը

Նրանց կը հանին, գիտեմ, Զաքարիան կը հասցնէ: Գրանցից մի հինգ մանկեթով իմ հողու համար ժամ-պատարագ կանեն: Կը վերջանայ փողը, ի հարկէ: Թեպէ՛ք Երեմիաներս դռները կընկնեն, փէշ կը բռնեն, հաց կը մուրան: Ել ուրիշ ճար չը կայ... Առաւս ու Սիմօնս միասին կը գնան. «Բաջի, մի ողորմութիւն արէք, Աստուած ձեզ պահէ»: Փողոցում մարդ կը տեսնեն, ձեռքները մեկնած կը դնան դէպի նրան: Ել կնիկս երեւաներս գլխներս ու չորերը չէր լուսնայ, մարդեր չէր սանդղի: Ինչ հարկաւոր էր: Խաւար, մարդու տեսնէին, ողորմութիւն չէին տայ: Կնիկս էլ մի կողմով կը գնայ: Խրիկունը կը գնէ, միասին կուտեն հաւաքած հացը... Ինձ կը մոռնան... Բայց Անդրէ: Տեսնես կնոջս խելը կը կտրի, որ նրան դռնէ դուռը չուղարկէ, տանը թողնէ: Մեծացած աղջիկ է... Այն, քանի սոված չուն ու զալ կան, ման են դալիս. ո՞ր մէկի ճանկը կընկնի: Չէ, Հիւրպատ, չէ, չը թողնես դուրս դալ փողոցը. քաղցած մեռիւր, փայտ կըր, չափահաս աղջիկը մարդկանց մէջ չը գցես. պահիր աչքիդ լոյսի պէս, որ մարդու տեսն: Աստուած, ինչ սարքեր ունէի, և հիմա ինչ եմ տեսնում, որ մէկ էլ չը գայ, չը մոտենայ: Բայց նա քաղցած է... Ինչ անի: Անուշ էլ այդպէս կը դառնայ: Կասնի, կը հարցնեն, ումի՞ աղջիկն է: Սարգսի աղջիկը. ինքը, խեղճը, զնաց օտարութիւն, այնտեղ մեռաւ...

Ինչպէս լաւ միտք եմ անում այս բոլորը: Մի միայն ետեւից, սարքած չինած գլուխս են դալիս այս մտքերը: Բայց բարձս թրջվել է արտասուք:

հասնում է մինչև 350:

Մեր ներկայ գաւառապետի տեղ նշանակվել է նորը Շուշի քաղաքից, որին շուտով սպասում ենք այստեղ:

Եղանակը քանի օր է, որ աստիկ անձրևային էր. սակայն հիմա արեւ է լինում, թէ և զգալի ջրերով և ցեխերից դեռ աղաւաղած չենք:

Ս. Մ.

ՆԱՄԱԿ ՆՈՐ-ԳԱՅԱՋԵՆՑ

Հոկտեմբերի 14-ին

Քեօսամահմադ դուռը գտնուում է Նոր-Բայազէտից դէպի արևմուտք 3 կամ 3 1/2 վերստ հեռավորութեան վրա: Այս դուռը կին ժամանակը կոչվել է եղել Գանձագլու, իսկ այժմ փոխվել է Քեօսամահմադի *), որ նշանակում է հերատ Մահմադ Քեօսամահմադը 1873 թվի ցուցակագրութեան ժամանակ ունեցել է 90 տուն ընտելի, իսկ այժմ հաշւում են 140—150 տուն ընտելի զուտ լուսաւորչական հայեր: Գիւղում կայ երկու եկեղեցի, մէկը ծառայում է ժամատարութեան համար, իսկ միւսը «մատուռ» անունով ուխտատեղի է. վերջինը նորոգել է և կարել բերել նոյն գիւղացի Աւետ անունով յայտնի հարուստ մարդը:

Այս գիւղացիք առանց բացառութեան պարտաւոր են երկրագործութեամբ և անասնապահութեամբ, ամենից շատը ոչխար են պահում: Չը նախընտրեն, որ ունեն բաւական լաւ և բերրի հողեր, բայց իրանց բազմութեան պատճառով, դարձեալ հողի պակասութիւն են դրում: Եւ այս տարվայ բերքը այս գիւղում շատ սակաւ է, այնպէս որ մեծ մասը մի 4—6 ամսվայ ուտելու ցորեն կամ դարի հալու ունենան: Իսկ այնուհետ թէ ինչպէս պէտք է անեն կամ ցանքի համար ինչ կերպով պէտք է ձեռք բերեն, դեռ յայտնի չէ:

Այս գիւղի ինչպէս և միւս հայ գիւղերի անասունները համայնաւորութեամբ թուրք գիւղերի անասուններին, շատ ստոր տեսակին են պատկանում, որովհետեւ հայերը սովորաբար կթի տաւարը կամ ոչխարը օրական երկու, նաեւ երեք անգամ (առաւօտ, իրիկուն և կէսօրին) են կթում *) և այն էլ այնպէս են դատարկում կաթը, որ էլ համարեալ ոչինչ չէ մնում, կամ շատ քիչ է մնում հոր-

*) Առատարակ Նոր-Բայազէտի գաւառի բոլոր գիւղերի անունները թուրքերէն են: *) Թուրքերը կթելով, դարձեալ բաւական կաթ են թողնում հորթի կամ գաւառի համար ծրծելու և 2 անգամ կթում են միայն յունիս և յունիս ամիսներում, երբ անասունները բաւական կուշտ են կերած լինում, իսկ այնուհետեւ կթում են օրական 1 անգամ և ապա բոլորովին չեն կթում:

ըովս. գլուխս էլ ուր դնեմ: Ուշս գնում է... մէկ էլ երեկոյանս եմ վարժում... Բայց օրից օր ծանրանում էի, ուշք չէր մնալ: Գլուխս, մարդկանց դուռով էի ճանաչում: Հինգերորդ օրը լեզուս կապվեց. ասեցի որ վերջս է:

XX

Աչքս բաց եմ անում... Ինչպէս որ ամառ ժամանակ գետում լողանում եմ, գլխերը դրանք, լուսնի տակ ընում, այնպէս էլ ես եմ ընկած. թիթեակացած, հանդիստ, հով: Ողորմած Տէր: Մըթնեւ էր: Տղերանց սենեակից ճրարը չորերն ընկել են իմ բոյնի առաստաղին. դրանք երկու թէ երեք մարդ հանգարտ խօսում են: Փայտի է աւանջ ընկել: Ցուրտ ցուրտ քրտինքի մէջ եմ ընկած. չորերս կպել են մարմնիցս, ականջներս ջրով լցվել էին: Բերանս առաւելայ պէս չորացած է, բայց էլի դառն է:

Քնով էի անցած, թէ ինչ էր, չը դիտէի, բայց աչքիս առաջ տեսել էի... երեխաներիս Աչքս բաց անելուն պէս չէի հաւատում թէ Բագու եմ: Այն տուն էի գնացել. երեխաներս չէին: Բագու էին ընկել, երեսու լիւրում էին, չէին թողում որ տուն մտնեմ. որը փէշիցս էր բռնում, որը ձեռքիցս, որը ոտիս տակն էր ընկնում: Բայց երբ երկար նայեցի չորս կողմիս, խելքս ինձ ասեց. «Էլա միտք արա, ասե ուրեղ ես. ծիտը երազում կորել կը տեսնէ: Ճշմարիտ էր. մէկի Միխայիլ ձայնը լսեցի: Նա, ինչպէս միշտ, նստել էր դուռում, երգում էր: Տէր Աստուած, մի հասկանաս լեզուն, տեսնում էի: Ես ասում... Մի-նակ այն եմ հասկանում, երբ նա պարզ կըլլացնում է. «Բայց իստաւոտ, իստաւոտ Աստուած, իստաւոտ լաւեր»:

Աստուած ինձ աղաւտեց: Առանց օտարի օղ-

թի կամ դառն ծծելու համար և այդ պատճառով էլ նոր սերունդը մնում է միշտ նիհար, նըւաղ և շատ մաշուր: Բաւական չէ որ այսպէս անհոգ են վարվում անասունների հետ, չեն էլ մըտածում դոնէ մի կարգին կերակրել դրանց և դըրանից յետոյ անխնայ բանեցնում են անասուններին կաշնելու ժամանակ, կապելով անասունների դունչը պարանոյ կամ ջուրով, որ ոչինչ չը կարողանան ուտել ծծած դարմանից:

Այս անգամ ես տեսայ, որ մի քանիսի կաշնութեամբ կամը ձի էին լծել և այն էլ ոչ թէ այնպէս, ինչպէս որ սովորաբար ձիերին լծում են, այլ ուղղակի ձիու վզին դրել էին փայտէ լուծը, ինչպէս տաւարին են անում և քշում էին ձիերին, որոնք քաշում էին իրանց ետեւից կամը: Այս գիւղի երկրագործական բոլոր գործիքները հին, նահապետական ձևով են մնացել և ոչ մի փոփոխութիւն չէ եղել, բացի սայլերից, որոնց այժմ կամաց կամաց փոխարինել են կաշկայի, այն է երկու ծանր անիւ ունեցող և դժուարութեամբ երկու սայլերի, այժմ գնում են չորս թիթեւ անիւների մի առաւելութիւն էլ այն է, որ սայլերից շատ բնու են վեր առնում և շատ սակաւ է պատահում, որ շուռ են գալիս, այն ինչ առաւելայ սայլերը միշտ դար ու փոս տեղերում շուռ էին անցնում և բացի այդ կաշկաները ասելի արագ են գնում քան սայլերը:

Գիւղերում մի շատ վատ սովորութիւն է մտել, այն է որ գիւղերի մի 3—4 հարուստ ասլած վաշխառուները անիրաւ և անողորմ կերպով կեղեքում են խեղճ ժողովուրդը և չը բաւականապէս 50, 80 և մինչև անգամ 100 տոկոսով, այժմ սկսել են նաեւ գրաւ վերառնել խեղճ գիւղացուց արտերը մի քանի տարի ժամանակով: Ես շատերից լսեցի հետեւեալը. «Կոտորեանց Գարութիւնից գնել եմ երկու եղ 80 մանէթի և իմ երկու լաւ արքը դրել եմ նրա մօտ զաւօց (գրաւ) որ նա (վաշխառուն) այդ արտերի արդիւնաբերութիւնը ստանայ ինչպէս սովոր 80 մանէթին մինչև այն ժամանակ, երբ ես կը կարողանամ վերադարձնել իմ պարքը 80 մանէթը»: Այս տարի էլ աղաւթ անխնայ կոտորում էր անասուններին և եթէ արտերի գրաւ դնելով ձեռք բերված եղն էլ ընկնում էր աղաւթ ճանկը, հօ խեղճ գիւղացին յաւիտեան մնում էր վաշխառուի պարտքի տակ և զրկվում իր լաւ հողերից: Լաւ չէր լինի արդեօք եթէ սրա վրա ուշ դարձնէին գիւղական տանուտէրերը և դատարանները և մի կերպ այս անխեղճութեան առաջը կտրէին, բայց ինչ եմ ասում, երբ գլխաւոր վաշխառուները նոյն իսկ տանուտէրները և դատարաններն են:

Նուրթեան աղաւտեց: Աստուծոն շատ մարդ է կանչում, որ օտարականին պահէ, պահպանէ: Սեղան չի բացվի, մի բաժակ դինի չի խմվի: Վարարագրում առանց օտարականի կնիացի: Ես ինքս քանի քանի խնդրեցներում խմել էի և կըրկնել ինձանից մեծերի ասածները. «Ծովում, ցաւ մարդ, անապատում, բանտում, դուրսը քարին, կողքը գետին, ինչ տեղ օտարական կայ նեղութեան մէջ, Աստուած ինքն օգնէ, պահէ: Որ իրանք այստեղ չեն, բայց իրանց սիրտը, հողին այստեղ է, բարով դան, իրանց բարեկամի կեանքը քաղաքացիներն»: Ո՛վ կարող է իմանալ, դոնց էնց այն իրիկունը, երբ իմ լեզուն կտրվեց, մի աստուածածնեք ինձ համար է Աստուած կանչել:

Զաքարիան եկաւ, քրտինքս տեսաւ, ասեց էլ չը վախս, պրծել եւս Պատմեց որ երեք օր ուշաթափ եմ եղել, որ ինքը շատ ժամանակ ինձ մօտ է մնացել: Ծնորհակալ եմ, դնացել է դաւալը-Սէթուն բերել, թէ և բոլորովին իմ միտս չէր, դալլաքս ինձ մտիկ է արել, ասել է արիւն առնելու ժամանակն անցել է, դրա ճարը մի լաւ քրտինքն է: Քրտինք բերող մի դեղ է տուել ու գնացել:

Տառն ու չորս օրից յետոյ կանգնեցի, թէ և շատ նուաղ էի: Ել չը սպասեցի. ընկերներին ասեցի գնում եմ տուն:

—Ի՞նչ է եկել ընդ, հարցրին նրանք, աշխատանքը լաւ է...

—Չուզեցի այսպէս աշխատանքը, ասեցի, մի կտոր չոր հացը երեխաներիս հետ ուտեմ, բաւական է:

Հանապաղ ընկայ դէպի մեր տուն:

XXI

Շուշի մօտայ կիրակի օր, կէսօրից յետոյ: Ամա-

Մոռացայ վերեւում յիշելու, որ այս տարի քեօսամահմադից բաւական կտաւատ էին ցանել և առատորէն հնձել, բայց դժբաղդաբար կտաւատի զինը այժմ կըսով չափ ընկած է, անցեալ տարի 30 մանէթով ծախվող կտաւատը, այս տարի 15 մանէթով էլ չեն առնում, որովհետեւ ուրիշ տեղերից պահանջ չը կայ, մնում է որ կտաւատից ձէթ հանեն և ապա ձէթը վաճառեն:

Նմանապէս այս տարի քեօսամահմադիցները ցանել էին բաւական կանափ, կաղամբ, դադար, բազուկ և բողի և ուրիշ բանջարեղէններ և լաւ բերք էին ստացել, այն ինչ առաջ այսպիսի բաների վրա չէին էլ մտածում:

Ս. Բ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՆԵՐ

ԱնՍԼԵՍԱՅԻՑ մեզ ուղարկված է հետեւեալ նըկատողութիւնը: «Թէ և ցանկալի է, որ գիւղացիները Անգլոլիպստում, ընդհանրապէս, սկսէին այժմ, բացի հողագործութիւնից, պարապել և այգեգործութեամբ ու բանջարանոցներով, բայց մեր երկրի մի քանի տեղերը այնքան բարձր դիրք ունեն, որ կլիմայի խստութեան պատճառով այդպիսի տեղերում ոչ այգեգործութիւնն է աւելցնում, ոչ էլ բանջարանոցներում կարողանում են այս ու այն պտուղները հասնել: Օրինակ Ալաւցիայի բանջարանոցներում չեն բուսում ոչ ձմերուկ և ոչ էլ սեխ: Այս պատճառով մնացնում այդ պտուղները շատ քիչ են գործածում, և եթէ երբեմն ուրիշ տեղերից բերում են մեզ մօտ սեխ կամ ձմերուկ, այդ պտուղները այնքան թանկ են ծախվում, որ նրանց առնելը մտաւելի է միմիայն հարուստներին»:

Տեղական ուստաց լրագիրները հաղորդում են, որ մի բժիշկ դիտարկութիւն ունի հիմնել թիֆլիսում մի հիւանդանոց հոգեկան հիւանդներին համար: Դա մեղանում առաւելին մասնաւոր հիւանդանոց կը լինի հոգեկան հիւանդների համար:

Ուրբաթ երեկոյան մենք ճանապարհ էինք դըրում դէպի Բագու մեր ծանօթներից մինին և առիթ ունեցանք անձամբ համոզվելու թէ որքան մեծ անկարգութիւն է տիրում թիֆլիսի երկաթուղային կայարանում: Երկաթուղու վարչութիւնը ծախում է առաջին և երկրորդ կարգի տոմսները աւելի մեծ թիւով, քան թէ տեղի կան վագոններում: Շատերը տոմսակ էին վերցրել երկրորդ կարգում և ստիպված էին կանգնել վագոնում: Ոմանք զանգառովեցան կայարանի գլխաւորին և սա թող

աւել էր, եղանակը հով, սիրուն: Մարդ, կնիկ, տղայ, աղջիկ դուրս թափված գնում էին ման գալու: Կասես լատնից էի աղաւաղել: Այնքան ուրախացայ, սկսեցի համարեալ վաղել:

Հայոց հրապարակից բարձրացայ, փոստի փողոցով անցնում էի. տունը մօտիկացել էր: Այդ փողոցում սալ բարի: Վրա նստած էր սպիտակ չադրայի մէջ վաթմաթիւմ մի կին: Ողորմութիւն էր խնդրում: Գլուխը գցել էր գողը, որ մարդ չը տեսնէ, ձեռքի կէսը դուրս էր բերել, բաց արել. ամեն մի ոտի ձայն լսելի ցած ձայն էր հանում: Շատերը չէին նայում, անցնում էին: Ես ձեռքս գրպանս տարայ, որ ողորմութիւն տամ, մանր փող չը կար: Լաւ, ասեցի, յետոյ կը տամ: Եւ էլ վաղեցի:

Հէնց ինչպէս հիւանդութեան ժամանակ տեսել էի, այնպէս էլ եղաւ: Երեխաները կպան ինձանից: Նրանց համար նոր էի աշխարհ եկել: Մարմինս փաշաւովեց, երբ տեսայ նրանց այնպէս տկոյր:

Կնիկս տանը չէր: Հարցնում եմ թէ ո՞ր է, լաց են լինում: Ես էլ լաց եղայ. Աստուած, անբախտութիւն չը լինի պատահած: Բայց Սիմօնս ինձ հանգապանեց, ասելով:

—Միշտ միշտ ժամանակն է դալիս:

Վերջապէս միտեց: Կնիկս սպիտակ չադրան շուռ կալած եկաւ: Ասեցինք, խօսեցինք: Ինչ ի մայր... Փողոցում նստած մուրացկանը իմ կընիկս է եղել... Արիւնս գլխիս խիբեց: Լեղուս էլ չը դօրեց, որ ուրախացնեմ, ասեմ մի նոր սընդուկ եմ բերել, ամենքի համար չիթ ու կտոր եմ բերել, մի տտոն կամ քսան մանէթ էլ փող: Ես կատաղել էի: Բայց ո՞ւր վրա:

Ի հարկէ, ինձ վրա, ինձ...

տուեց երկրորդ կարգում տեղ չունեցողներին անցնել առաջին կարգը, սակայն յայտնվեցաւ որ և առաջին կարգում բոլոր տեղերը բռնկուած էին Բացի սրանից ճանապարհորդները վազօններ նստելու ժամանակ չը դիտեն հոմ դիմեն, թէ վազօններում և թէ պատֆօրմի վրա երկաթուղային ծառայողներ, կամ գնացքի կօնդուկտորներ չեն երևում, իսկ եթէ մէկն ու մէկը նրանցից երևում է, նա ձեզ ոչինչ պատասխան չէ տալիս, երբ որ դուք նրան դիմում էք ձեր տոմսակին համեմատ վազօնում տեղ գտնելու համար: Վարչութեան, կայաբանի և գնացքի մանր ծառայողները աւելի դժգոհուած են երկաթուղու վարչութեան այս կամ այն պաշտօնեային վազօններում տեղաւորելու մասին, քան թէ վճարող ճանապարհորդներով: Սրանց վրա մէկը չը կայ որ ուշադրութիւն դարձնին:

«Մշակի» նախընթաց № 120-ի մէջ տպւած ներքին լուրերի վերջինում, խօսելով պ. Յաղաբէյի մասին, սխալմամբ անուանեցինք նրան Լազարեան ձեռնարանի պրոֆէսոր, այն ինչ նա Պետերբուրգի համալսարանի վրաց լեզուի պրոֆէսոր է: Իսկ Լազարեան ձեռնարանի վրաց լեզուի պրոֆէսոր պ. Սերբերեալօն է:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ մեղ գրում են, որ մօտիկ ապագայում յայտնի ընկել էլիսէի, որ նորերումս ճանապարհորդել է Անդրկովկասում և թիւրքաց Հայաստանում, կարգաւու է Солянкой Городецк անուանված տեղում դասախոսութիւններ մի շարք վաճառքի դրոշմաւոր մասին արեւելքում: Դասախոսութիւնները անշուշտ շատ հետաքրքիր են լինելու:

Պետերբուրգում հրատարակող «Гражданин» լրագրում, որ այժմ ամենօրեայ է դարձել և որ խմբագրում է յայտնի հանաքչի-հրապարակախօս իշխան Մէշչերսկի, այս օրերս տպւեցաւ մի յօդուած На Кавказѣ (Կովկասում) վերնագրով, որը ստատիկ յարձանակ է վրացիների դէմ, մի-դարձելով վրաց նոր սերունդին ազատամտութեան մէջ: Յօդուածագիրը խոստանում է հետեւեալ համարներում գրել և հայերի մասին:

Ստացանք շնորհակալութեամբ «Опыты практической химии» ուստերէն գրքովը, որ կաղմել է Պ. Շելուս Կրքովը տպւած է Պետերբուրգում ներկայ 1887 թւին, Գիմնազիի տպարանում:

Երէկ թիֆլիսում ստացվեցաւ մի տխրալի հեռագիր Ստալրօպօլից: Այդ քաղաքում ապրող Գիմնազիի Կիպիտանի, թիֆլիսի նախկին քաղաքագլուխը և Գուկայիսի աշխատակցութեան նախկին առաջնորդը, գիշեր ժամանակ իր բնակարանում սպանուեցաւ անյայտ չարագործների ձեռքով:

Ձեռնածու պ. Դոտկիլի չարունակում է զբաղեցնել թիֆլիսցիներին իր ներկայացումներով: Պարտը մեծ ճարպիկութեամբ անում է իր փորձերը, բայց մանաւանդ ամենքին հետաքրքրում է նրա ժողովրդական տիպերի ներկայացնելը: Առանց որ և է գրիմի, ծածկելով զլիսին այս կամ այն զլիսարկ, Դոտկիլի թույլատրելի փոխում է իր դէմքը և հառաքակութեան առջև ներկայանում է կամ մի զինուոր, կամ մի պառաւ կին, կամ մի ծերունի, կամ մի մօղիբուլ կին և այլն: Դոտկիլի փորձեց շարաթ օր, թատրոնում իր տուած ներկայացման վերջը, ներկայացնել և տեղական կովկասեան մի քանի տիպեր, որոնցից մի քանիս նրան շատ լաւ աշուղեցան: Արիակի օր, առաւօտեան ներկայացման ժամանակ, կրուծօկի դահլիճն էլ լի էր բաղմութեամբ: Մեծ մասամբ ելել էին հայերը և մայրիք իրանց երկխա- ներով:

«Кронштадск. Вѣстн.» լրագիրը հաղորդում է, որ հոկտեմբերի 15-ին ուսու նաւատորմի վրա ծառայողները Պետերբուրգում «Գոնօնի» հիւրանոցում մի ճաշ տուեցին նկարիչ պրոֆէսոր Յ. Ալ- վաղօսկուն: Ճաշին ներկայ էին՝ ծովային մի- նիստրութեան ժամանակաւոր կառավարիչը, ազ- միրալտէյսուօի, ծովային խորհրդի և ծովային դասաստանի զրեթէ բոլոր անդամները: Ճաշի ժամանակ փոխ-ծովապետ Չիխաչօվ շնորհակալու- թիւն յայտնեց աւագ ծովապետ, պետական խորհ- րդի անդամ գեներալ-ադիւտանտ Դոյնսկիսկու-

կողմից, որ տկարութեան պատճառով անձամբ չէր կարող ներկայ լինել: Ճառեր ասացին՝ փոխ- ծովապետ Ա. Ալանսէէօվ, գեներալ-ադիւտանտ Պ. Կազանկիլի, փոխ-ծովապետ Չիխաչօվ և այլն: Ճա- շի ժամանակ կարդացվեցան Սեվաստօպօլից և Նի- կոլայեվից ստացած հեռագիրները:

Պետերբուրգում, ինչպէս հաղորդում է «Пет. Вѣд.» լրագիրը, նորից լուրեր են տարածվում, որ իբր թէ ծխախոտի մենաւաճառութեան հար- ցը այս տարի կը վճռվի զրական կերպով. բոլոր այժմս գոյութիւն ունեցող ծխախոտի գործարան- ները կանցնեն կառավարութեան ձեռքը, իսկ ինչ վերաբերում է ծխախոտի արտադրութեան և վաճառման, դրանով կը պարապվեն, ինչպէս Ֆրանսիայում, Ֆինլանդիայի մինիստրութիւնից նշանակված մարդիկ: Մինիստրութեան մեջ եղած տեղեկութիւններից երևում է, որ անցեալ 1886 թւականին առել են պետական գանձարանից 283,565 վրայական ծխախոտ վաճառելու հա- մար:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԳԻՍՅՈՅ

Հին-Բայազէտ 10 հոկտեմբերի

Անդրկովկասում յայտնի աւաղակապետ Գեարա- մը, բաւական երկար առնն թիւրքիայում կը գտնվի: Նա կը բնակի Բագրեանդայ (Ալաշկերտ) Բասէն գաւառի Տոտի կոչված դիւղում և կը կրի այժմ Գեարամ-բէջ անունը: Նա, որքան մեղի- լուրեր կը համարի, իր բնակութեան տեղին մէջ մեծ նշանակութիւն ունի, ամեն տեսակ կամակա- կանութիւններ կընէ, և տեղային իշխանութիւնը, կատարեալապէս անգոր ըլլալով, ոչինչ կարող չէ ընել այդ բարբարոս մարդու կամականութիւնը դադարեցնելու համար: Առհասարակ թիւրքիայի շատ գաւառների մէջ օրէնքին և արդարութեանը՝ բար- բարոսութիւնը և վայրենի ոյժը կը փոխարինէ: Իսլամ քրիստոնէ, օրինակ, սիրունդէ ի- բրանց նպատակը դրած են ճնշել հայ ազգաբնա- կութիւնը, անոր ֆիզիկական ոյժերը ջլատել, հայ տարրը հարստահարել: Թիւրքաբնակ հայի անհատական իրաւունքն քրդաց ցոյց տուած հիււ- ստրկական ծառայութեան մէջ կը փայլի: Քիւրդը բաւական չէր Ալաշկերտի համար, այժմ անոր բարբարոս վարմանց աւելցաւ նաև մի նոր կա- մայական ոյժ,— աւաղակապետ Գեարամ-բէջի կա- մայական իշխանութիւնն, վասն զի Գեարամը հոս տեղ աւատական իշխանի իրաւունքները կը վա- յելէ թէ մասնաւորապէս և թէ մանաւանդ քրիստո- նեայ ժողովրդին վերաբերմամբ:

Այս քանի մի օր է արդէն, որ մեղի լուրեր կուզան Ալաշկերտէն, թէ Բասէն գաւառի Տոտի դիւղում Պոյաճեան երկու հարուստ եղբայրները սպանված են Գեարամի հրամանով: Անոնց յան- ցանքն հետեւեալ մեթօնին եղած է, որպէս կը պատմեն հոն տեղից եկողներն: Պոյաճեան եղ- բայրները մեթօն են տալ 150 ոսկի, որ դու- մար կը պահանջէր անոնցմէ՝ Գեարամ-բէջը: Սա բացասական պատասխանը հօգը աւաղակապետին բարկութիւնը կը չարժէ, այնպէս որ հետեւեալ ա- ռաւօտուն Գեարամը իր թիկնապահներով կեր- թայ դէպի հայոց եկեղեցին, կը կանգնի տաճա- րին դրան առջև, եկեղեցիէն դուրս կանչել կը տայ Պոյաճեան եղբայրներուն և հրապարակապէս ամենեցուն առջև, եկեղեցու դռներին դիմաց գտնվող հրապարակին վրա սպանել կը տայ Պո- յաճեան եղբայրներէն մինին հրացանի գնդակով, իսկ միւս եղբոր բռնել կը տայ և տանը սպանել կը տայ:

Այս ոճրագործ դէպքէն մի քանի օր ետքը Ա- լաշկերտի Ամաղ կոչված դիւղի 10 հոգի հայ չի- նականք, որոնք Ռուսաստան գնացած ըլլալով, որպէս բանտրուի աշխատելու, վերադառնալով իրանց ծննդավայր Ամաղ դիւղը, քրիստոնէ բոլոր տան հոգուն ալ հաւերու նման կը մորթին ու իրանք ալ կը փակչնաւ Լրսնն թէ չարագործներէն ոմանք բռնված ձերբակալված են ոստիկա- նութիւնէ: Այս օրինակ դէպքերն սովորական երե- լայիներ կը համարվին Տաճկաստանում, այնպէս որ երկրին խաղաղ և աշխատասէր ժողովուրդը, որ զլիսաւորապէս հայերէն կը բարկանայ, յուսա- հատված ըլլալով աննախանձելի և անհաստատ վիճակէն, կը պատրաստվի զարթելու, իր սիրելի ծննդավայրէն տարալորվելու:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Բերլինից հեռագրում են, որ Վիլհելմ կայսրը միտելով հիւանդացաւ և այդ պատճառով չը դը- նաց օրսի:

—Բերլինից հեռագրում են, որ Ռիստիչին ա- ջողվեց մինիստրական ճգնաժամի առաջն առնել, ապառաժիտ կուսակցութիւնը հաշտեցնելով ար- մատականների հետ:

—Կ. Պօլսից հեռագրում են, որ Ալքրիանօպօլիսի յունադաւան արքեպիսկոպոսը գանգատվում է, որ նրա թեմում կաթօլիկական պրօպագանդան առա- ջադիմութիւն է անում:

—«Evenement» լրագրի Բերլինի թղթակցի ա- սելով, իշխան Բիսմարկ հիւանդ է, և նրա հիւան- դութիւնը այնքան ծանր կերպարանք է ստացել, որ հարկաւոր է գտնված հիւանդութիւնը գաղտնի պահել:

—«Lanterne» լրագիրը ընդդէմ է պարլամեն- տական յանձնաժողով ընտրելուն Վիլհելմի և միւս- ների գործը ըննելու համար, որովհետեւ մի այդ- պիսի ընտրութիւն կը ստիպէր հանրապետութեան այժմեան նախագահ Գրէվին հրաժարվել իր պաշտօնից, և այդ հրաժարականը մի ճշմարիտ չարիք կը լինէր Ֆրանսիայի համար: Ժիւլ Գրէվի պաշտօնը թողնելուց յետոյ, շատ կարելի է, որ նախագահ կընտրեն Ժիւլ Ֆերիին, իսկ ներկայ հանգամանքներում այդ բանը անպատճառ ապա- տամբութիւն և կուի կը ծագեցնի Փարիզի մէջ: «Matin» լրագիրը հաւատացնում է, որ սենատը ձայն կը տալ ընտրութեան դէմ:

—Փարիզից հեռագրում են, որ հանրապետու- թեան նախագահ Գրէվի վերջին ժամանակներս ստացած անբաւականութիւնների և վշտի պատ- ճառով հիւանդացաւ Միսպետականները շարու- նակում են յարձակվել Վիլհելմի վրա, բարդելով նրա վրա առանց փաստերի դանազան մեղա- դրանքներ: «Soleil» և «Siècle» լրագիրները հա- տատում են, որ ներկայումս այլ ևս վտանգ չը կայ, որ Գրէվի կը հրաժարվի:

—Անգլիական կառավարութիւնը ստորագրեց միջազգային գրականական դաշնագիրը, որ կը սկսի գործադրվել Անգլիայում գեկտեմբերի 5-ից: Այդ դաշնագրութեան տակ այժմս ստորագրված են Ֆրանսիան, Գերմանիան, Սպանիան, Ռումի- նիան և Լիբերիան:

—Գերալտարի խառնակութիւնները, որոնց մասին մենք հաղորդեցինք, քանի գնում են աւելի- ծանր կերպարանք են ստանում: Բոլոր փողոցները այժմս ստացել են պատերազմական զօրաբանակի կերպարանք: Ձանազան գնդերի մէջ երկպառա- կութիւնները աւելանում են: Ձինուրները հրա- ժարվում են լսել իրանց իշխանաւորների հրա- մանները: Անգլիայից նոր զօրքեր են ուղարկված, որ կարելի լինի ապստամբված գնդերը հեռացնել:

—Բուլղարական սղզային ժողովը ինքնակամ, ընդդիմաբարական կուսակցութեան անդամների բացակայութեամբ, ընդունեց պրինց Ֆէրդինան- ղին տրվելի շնորհակալական ուղերձը:

—Վարնայից հեռագրում են, որ այնտեղ ձեր- բակալված է մի աւստրօ-հայտակ, Ֆրանց անու- նով ոմն, որի մօտ իբր թէ գտել են դժոխային մեղքնայ, որը այդ մարդը բերել էր Կոբուրգի պրինցի կեանքի դէմ փորձ անելու համար:

—Կ. Պօլսից ստացած տեղեկութիւններից երե- լում է, որ թիւրքեան այժմս լցված է աւաղակ- ներով: Նրանք մանաւանդ գործում են Մակեդո- նիայում, Չիլաբիայի վրայից, Իպիլի չըջա- կայրում և հայկական Բիւրդիստանում:

—«Нов. Вр.» ասելով գերմանական և մանա- ւանդ աւստրիական մամուլը կասկածանքով է նայում բուլղարական հարցի առիթով Ռուսաստա- նի այժմս բռնած քաղաքականութեան վրա: Լրա- վերները չեն հաւատում այն լուրերին, որ Ռու- սաստանը այլ ևս չէ հետադարձվում բուլղարական հարցով, և «Nord» լրագրի այն յօդուածը, որի մէջ յայտնված է, որ Ռուսաստանը այժմս միտք ունի ուշադրութիւն դարձնել աւելի ամիսական գործերի վրա, մի խաղաղութիւն են համարում, որ պէտք է կապի Եւրոպայի արթուն աչքերը:

—Բերլինում լուրեր են տարածված, որ իբր թէ իշխան Բիսմարկ մտադրութեան ունի ընկիս- տագրում Գերմանիայի և Ռուսաստանի յարաբե- րութիւնների մասին մի ղեկուցում տալ: Գրա- համար որ և է պատրուակ չէ հարկաւոր, քանի որ բիւրգետի ընտրութեան ժամանակ ինքն ըստ ինքեան առիթներ առաջ կը դան բարձր քաղա- քականութեան վրա խօսելու:

—Ջուլուսները նորից ապստամբվել են, այնպէս որ Անգլիան նորից պէտք է նրանց դէմ կուգի: Կէտէվաօի որդի Գինիդուօի սպառազինութեան պատճառով հրամայված էր զուլուսների երկիրն ուղարկել բաւական թւով թէ հետեակ և թէ հե- ծկազօրք: Ինչպէս երևում է այդ ոյժերը բաւա- կան չէին համարված, որովհետեւ մի քանի ժամա- նակից յետոյ նորից հրամայված էր ուղարկել եր- կու էսկադրօն թնդանօթանիք և հեծելազօրք:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Թէ ինչ բան պէտք է սովորեցնել օրիորդներին, հետեւեալ կերպով է բացատրում մի Ամերիկական լրագիր: «Տուեցէ՛ք ձեր օրիորդներին կանոնաւոր միջնակարգ ուսում, սովորացրէ՛ք նրանց պատ- րաստել կերակուրներ ինչպէս հարկն է, լուսացը լուսնալ, ութնոյնը, սպիտակեղէն կարել ու կար- կատել և առհասարակ շորեր կարել և մինչև ան- դամ հաց թխել, և ընտելացրէ՛ք նրանց ճշմարիտ մտքին, թէ լաւ տնտեսուհին, կերակուրների պատ- րաստելու մէջ հմուտ տանտիկինը՝ տնտեսու- թեան մէջ մեծ խնայողութիւն կարող է անել և ղեղատնեւելին շատ քիչ օգուտ կը տայ: Բա- ցատրեցէ՛ք ձեր աղջիկներին որ հարստանալ կա- րող է միայն նա, որի ծախքը աւելի պակաս է, քան թէ եկամուտը, իսկ ով իր եկամուտից աւելի է ծախսում, նա անպայման պէտք է քանդվի: Թող ձեր աղջիկները հասկանան որ չիլիճ զգեստը, որի համար փողն արդէն վճա- րած է, աւելի է նրանց սաղում, քան մետաք- սեայ հագուստը, որի փողը դեռ վճարած չէ: Նոյնպէս հարկաւոր է օրիորդներին դիտեալ որ հաստիկ, առողջ, կարմրաթուռիկ աղջիկը աւելի գին ունի, քան թէ հարկը դեղնած, նիհար, բա- րակացաւոր գեղեցկուհիները: Կուր ծնողներ, բն- տեղացրէ՛ք ձեր աղջիկներին առեւտուր անելուն, թող նրանք իրանք հոգան թէ իրանց տան և թէ իրանց սեփական անձի պիտուքներն առնելով, թող ամեն բանի հաշիւները իրանք տեսնեն: Պէտք է բացատ- րել օրիորդին որ նա իր կուրծքը կորսնցնող և ոտները նեղ կոշիկներով սեղմելով՝ այլանդակում է բնութիւնից տուած կողմնակաճը: Պատրաստե- ցէ՛ք ձեր աղջիկներին աշխատասիրութեան, ինք- նագոյնութեան համար, հասկացրէ՛ք դրանց որ մի համեստ արհեստաւոր առանց մի կոպէկ փողի և առանց հրապուրիչ զգեստի, աւելի արժէք ունի, քան թէ չքեղ հագնված մեծամիտ և աշխատա- լից փախչող մի երիտասարդ: Աշխատեցէ՛ք ձեր աղջկայ մէջ սէր դարգացնել դէպի բնութեան գեղեցկութիւնը, դէպի այլեզորութիւնը, դէպի դաշտը, թող նա հասկանայ որ ոտով զբօսնելը աւելի առողջ և դուրեկան է քան կառքով: Սովո- րեցրէ՛ք նրան չը հրապարակալ արտաքին փայլով, լինել համեստ և ճշմարտասէր: Սակայն եթէ ա- լիւրդը նիւթական միջոցներ ունէր, թող ձեր աղ- ջիկը ուսումնասիրէ և երաժշտութիւնն ու նկար- չութիւնը, բայց մի մոռանա՛ք որ դրանք երկ- րորդական բաներ են: Հասկացրէ՛ք ձեր աղջկան որ նրա կեանքի երջանկութիւնը ոչ թէ հարս- տութեան մէջն է, այլ իր ամուսնու բնաւո- րութեան մէջ: Եւ եթէ ձեր աղջիկները աղջ ըլլորը կիրացնեն,—կարող էք հանգիստ արտով ամուսնացնել նրանց: Այն ժամանակ հաւատա- ցած եղէք որ դրանք այդ հանգամանքների մէջ երջանիկ կը լինեն և ոչինչ վտանգ չի սպառնայ նրանց ապագայ կեանքի անդորրութեանը»:

ՄՇԱԿԻ ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱՎԱԼՈՒԹԻՒՆՆԵՑ

ԲԵՐԼԻՆ, 23 հոկտեմբեր: Գերադատեալական խորհրդի այսօրվայ նիստում, հացահատիկները հարկատուութեանը նիւթարկելու հարցի սկզբնա- կան ձայնատուութեան ժամանակ, վճարական սահ- մանը հարկերը հետեւում չարկով, հաւաքի և ցո- բենի վրա 6 մարկ, դարու և վարսակի վրա 3 մարկ, սև ցորենի վրա 2 մարկ, բրինձի վրա 5 մարկ, սիմիւղի վրա 3 մարկ: Բացի սրանից ո- ըրովեցան հետեւեալ հարկերը. մսի էկտարակտի վրա 12 մարկ, մանր արդիւնագործութիւնների վրա 10 մարկ, ձիերի վրա 50 մարկ, մի- տարեկանից աւելի ջուտակների վրա և պօսանքի վրա 20 մարկ, վերջապէս խողովի վրա 10 մարկ:

ԳՈՐԾԱՎԱԼՈՒՆ, 23 հոկտեմբեր: Կառավարութիւնը դատաստանական ընտրութիւն նշանակեց Վուդօր- տի մէջ տեղի ունեցած գերեզմայ ժողովին մաս- նակցողների դէմ, որտեղ հրապարակապէս այրված է եղել իրանիայի փոխ-արքայի հրաւիրադիրը: Մասնակցողների թւում գտնվում են պարլամենտի անդամներ. Բաուլէստ, Հիւլ, Շիլի և Գուրլինի լորդ-մէրի քարտուղար Մէրուէ-Գէնչի:

ՍՈՖԻԱ, 24 հոկտեմբեր: Աւաղակութիւնը Արեւելեան-Ռումիլիայում ուժեղանում է: Խալիգա- զրայի մօտ տեղի ունեցաւ ընդհարում ժանդարմ- ների և 15 հոգուց բաղկացած աւաղակային մի խմբի մէջ: Աւաղակներից 8 հոգի գերի են բռնված,

